

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 5-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 5-ին, Երևանի «Արմենիա» հյուրանոցի ընդունելության սրահում, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը ընդունելություն է կազմակերպում Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձի, Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանի ու նրա շքախմբի անդամների պատվին։

Ընդունելության ներկա են Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը տիկնոջ հետ, տեղակալ պր. Մ. Հովհաննիսյանը տիկնոջ հետ և խորհրդի անդամները։

Հրավիրյալների թվում են Հայկական ՍՍՌ լուսավորության մինիստր Շ. Սիմոնյանը, Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստր Ռ. Խաչատրյանը, Արտասահմանի հետ մշակութային կապի ընկերության նախագահ տիկին Բ. Գրիգորյանը, սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը, ճարտարապետ Մ. Մազմանյանը, բանաստեղծներ Սիլվա Կապուտիկյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Սողոմոն Տարոնցին, գրող Ս. Խանզատյանը և ուրիշներ։

Ընդունելության ներկա են նաև Տ. Սահակ, Տ. Ասողիկ, Տ. Կոմիտաս սրբազանները, Տ. Շահե, Տ. Կյուրեղ, Տ. Վահան, Տ. Մեսրոպ (Գրիգորյան), Տ. Արսեն, Տ. Մեսրոպ (Պալյան) վարդապետները, Տ. Արիս աբեղան, Մայր Աթոռի դիվանապետ Հ. Առաքելյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը։

Պատվո սեղանի շուրջ տեղ են գրավել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը, դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը, մինիստրներ Շ. Սիմոնյանը, Ռ. Խաչատրյանը և Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, որը և ղեկավարում է սեղանը։

Ելույթ են ունենում Վեհափառ Հայրապետը, պատրիարք սրբազան հայրը, դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը, տիկին Բ. Գրիգորյանը, Վ. Համազասպյանը, Սիլվա Կապուտիկյանը, Հ. Հովհաննիսյանը, Լ. Խաչիկյանը, Մ. Մազմանյանը, Ս. Խանզատյանը և ուրիշներ։

Ընդունելությունն անցնում է բացառիկ ջերմ, հայրենասիրական մթնոլորտում։